ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԱՌԿԱ ԲԱԺԻՆՆԵՐԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ 2023-2024 ՈՒՍՏԱՐՎԱ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՈՐԱԿԻ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԳԱՎԱՌ 2024

Հարցման արդյունքների վերլուծությունը կատարվել է ԳՊՀ որակի ապահովման բաժնի կողմից 2024թ. հուլիսի 25-ին։

Որակի ապահովման բաժնի վարիչ՝ Հայրապետյան Ք.,

պատասխանատուներ՝ Նախրատյան Մ.,

Մուրադյան Ն.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. Հարցման ընդհանուր նկարագիրը ……..…4
II. Հարցման մեթոդաբանությունը ……4
III. Գավառի պետական համալսարանում դասավանդման որակի և ուսումնական գործընթացի արդյունավետության գնահատում……..……5
IV. Եզրակացություններ և առաջարկություններ ……..……22

I. Հարցման ընդհանուր նկարագիրը.

Դասավանդման որակից ուսանողների բավարարվածությունը գնահատելու, վերլուծություն իրականացնելու, ուսման որակը բարելավելու նպատակով Գավառի պետական համալսարանի (այսուհետ՝ ԳՊՀ, Համալսարան) որակի ապահովման բաժնի կողմից առկա ուսուցման համակարգում սովորող ուսանողների շրջանում իրականացվել է հարցում նախապես մշակված առցանց (online) անանուն հարցաթերթիկի միջոցով:

Հարցման նպատակն է՝ բացահայտել առկա խնդիրները, ուսումնասիրել, վերլուծել, գնահատել ուսանողների կարծիքները, նկատառումները, առաջարկությունները, դժգոհությունները, դրանց հաշվառմամբ՝ ներկայացնել առաջարկություններ և ձեռնարկել միջոցներ՝ ուսումնական գործընթացի որակն ու արդյունավետությունը բարձրացնելու, հիմնական շահառուների բավարարվածության աճին նպաստելու համար:

II. Հարցման մեթոդաբանությունը.

Հարցաթերթը բաղկացած է փակ, բաց և ինտերվալային հարցերից: Հարցաթերթի հարցերը մշակվել և կազմվել են որակի ապահովման բաժնի աշխատակիցների և ԳՊՀ դասախոսների, ուսանողների համատեղ աշխատանքի արդյունքում: Հարցաթերթի նպատակն է որակական և քանակական տվյալների հավաքագրումն ու վերլուծությունը, եզրակացությունների և առաջարկությունների ներկայացումը՝ միտված ԳՊՀ-ում կրթության որակի բարձրացմանը և ներքին շահակիցների բավարարվածության աճին:

III. Գավառի պետական համալսարանում դասավանդման գործընթացից առկա ուսուցման համակարգում սովորող ուսանողների բավարարվածության գնահատում

ԳՊՀ 2023-2024 ուստարում առկա ուսուցման համակարգում սովորող 290 ուսանողներից հարցմանը մասնակցել են 151-ը, որը կազմում է գործող ուսանողների 52,06%-ը:

1. Ընդհանուր տեղեկություններ.

Հարցմանը մասնակցած ուսանողների թվաքանակն՝ ըստ ֆակուլտետների և մասնագիտությունների.

Ֆակուլտետը, բաժինը	Ուսանողների ընդհանուր թիվը	Հարցմանը մասնակիցներ ի թիվը	Հարցմանը մասնակիցներ իտոկոսային հարաբերությունը
Հումանիտար մասնագիտությունների	**148**	**92**	**62,16%**
Հայոց լեզու և գրականություն	26	16	61,53%
Անգլերեն լեզու և գրականություն	33	26	78,78%
Իրավագիտություն	47	28	59,57%
Պատմություն	12	8	66,66%
Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	30	14	46,66%
Բնագիտատնտեսագիտական	**142**	**59**	**41,54%**
Կենսաբանություն	3	-	0%
Սերվիս	16	2	12,5%
Համակարգչային ճարտարագիտություն	23	11	47,82%
Դեղագործական քիմիա	7	5	71,42%
Ֆինանսներ /ըստ ոլորտի/ Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ	47	18	38,29%
Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/ Հաշվապահական հաշվառում /ըստ ճյուղերի/	18	10	55,55%
Տնտեսագիտություն	28	13	46,42%
Ընդամենը	**290**	**151**	**52,06%**

Գծապատկերից ակնհայտ է դառնում է, որ հարցմանն առավել ակտիվ մասնակցել են Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի առկա բաժնի «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության և Բնագիտատնտեսագիտական ֆակուլտետների առկա բաժնի «Դեղագործական քիմիա» մասնագիտության ուսանողները:

Հաջորդիվ ընդհանուր մասնակիցների թիվը՝ 151-ը, կընդունենք որպես 100%, և ուսանողների մասնակցությունը հարցմանը, ըստ ֆակուլտետների, կունենա հետևյալ պատկերը (տե՛ս գծապատկեր 1):

Գծապատկեր 1.



<u>Ուսանողների մասնակցությունն՝ ըստ կրթական աստիճանների.</u>

Գծապատկեր 2.



Գծապատկերից պարզ է դառնում է, որ ընդհանուր հարցվողների 87,78%-ը (134 ուսանող) բակալավրիատի, իսկ 12.25 %-ը (17 ուսանող) մագիստրատուրայի ուսանողներ են: Եթե հաշվի առնենք, որ ԳՊՀ մագիստրատուրայում սովորող ուսանողների ընդհանուր թիվը կազմում է բուհի առկա ուսուցման համակարգում սովորող ուսանողների 22.75%-ը, այսինքն՝ ուսանողների մոտավորապես 1/4-ը, ապա հարցմանը մագիստրատուրայի մասնակցությունը գնահատվում է պասիվ:

2. ԳՊՀ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Գնահատման համար ընտրվել է ինտերվալային՝ 1-5 միավորանոց, սանդղակը։

Հարցման արդյունքները՝ ըստ հարցերի հերթականության

Հարց 1-ին. Դասախոսը նյութը մատուցում է պարզ, հասկանալի, հետաքրքիր և մատչելի:

Հ/հ	Ֆակուլտետ, ամբիոն	2021-2022 ուստարի	2022-2023 ուստարի	2023-2024 ուստարի
Հումանիտար մասնագիտությունների		**4,61**	**4,74**	**4,60**
1	Հայոց լեզվի և գրականության	4,65	4,79	4,68
2	Օտար լեզվի և գրականության	4,52	4,6	4,57
3	Իրավագիտության	4,9	4,8	4,63
4	Հասարակական գիտությունների	4,4	4,77	4,55
Բնագիտատնտեսագիտական		**4,55**	**4,74**	**4,59**
5	Ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների	4,61	4,78	4,51
6	Կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի	4,5	4,84	4,47
7	Կառավարման և ֆինանսների	4,49	4,65	4,69
8	Հաշվապահական հաշվառման	4,6	4,71	4,71
Միջին գնահատական		**4,58**	**4,74**	**4,60**

Համեմատելով աղյուսակում նշված երեք ուսումնական տարիները՝ կարող ենք նշել, որ Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետում նկատվում է պրոֆեսորադասախոսական կազմի միջին գնահատականի նվազում՝ 4,74-ից 4,60 միավոր։

Բնագիտատնտեսագիտական ֆակուլտետում կրկին նկատում է նվազում՝ 4,74-ից 4,59 միավոր։

Առաջին հարցի պատասխանների արդյունքներով ԳՊՀ ամբիոններից առավել բարձր միջինացված գնահատական գրանցվել է Հաշվապահական հաշվառման ամբիոնում՝ 4,71 միավոր։ Ամենացածր միջինացված արդյունք՝ 4,47 միավոր, ամրագրվել է Կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնում։

2021-2022, 2022-2023 և 2023-2024 ուսումնական տարիների միջինացված գնահատականները համեմատական վերլուծության համար ներկայացնենք գծապատկերի տեսքով /տե՛ս գծապատկեր 3/:

Գծապատկեր 3.



Հարց 2-րդ. Դասախոսը լսարանում կառավարում է ժամանակը և պլանավորում դասընթացը:

Հ/հ	Ֆակուլտետ, ամբիոն	2021-2022 ուստարի	2022-2023 ուստարի	2023-2024 ուստարի
Հումանիտար մասնագիտությունների		**4,62**	**4,81**	**4,65**
1	Հայոց լեզվի և գրականության	4,74	4,79	4,70
2	Օտար լեզվի և գրականության	4,51	4,78	4,62
3	Իրավագիտության	4,92	4,93	4,70
4	Հասարակական գիտությունների	4,34	4,76	4,61
Բնագիտատնտեսագիտական		**4,56**	**4,75**	**4,57**
5	Ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների	4,66	4,8	4,53
6	Կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի	4,46	4,83	4,54
7	Կառավարման և ֆինանսների	4,53	4,65	4,67
8	Հաշվապահական հաշվառման	4,60	4,73	4,54
Միջին գնահատական		**4,59**	**4,78**	**4,61**

2022-2023 և 2023-2024 ուսումնական տարիների համեմատության արդյունքում պարզ է դառնում, որ 2-րդ հարցի դեպքում երկու ֆակուլտետներում էլ նկատվում է պրոֆեսորադասախոսական կազմի միջին գնահատականի նվազում:

Երկրորդ հարցի պատասխանների արդյունքներով ԳՊՀ ամբիոններից առավել բարձր միջինացված գնահատական գրանցվել է Հայոց լեզվի և գրականության և Իրավագիտության ամբիոններում՝ 4,70 միավոր: Ամենացածր միջինացված արդյունք՝ 4,53 միավոր, գրանցվել է Ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնում:

Երկրորդ հարցի 2021-2022, 2022-2023 և 2023-2024 ուսումնական տարիների միջինացված գնահատականները համեմատական վերլուծության համար ներկայացնենք գծապատկերի տեսքով /տե՛ս գծապատկեր 5/:

Գծապատկեր 5.



Հարց 3-րդ. Դասախոսը դասավանդման ընթացքում կիրառում է ինտերակտիվ (փոխներգործուն) մեթոդներ:

Հ/հ	Ֆակուլտետ, ամբիոն	2021-2022 ուստարի	2022-2023 ուստարի	2023-2024 ուստարի
Հումանիտար մասնագիտությունների		**4,71**	**4,67**	**4,49**
1	Հայոց լեզվի և գրականության	4,73	4,67	4,58
2	Օտար լեզվի և գրականության	4,54	4,49	4,45
3	Իրավագիտության	4,89	4,86	4,55
4	Հասարակական գիտությունների	4,69	4,67	4,38
Բնագիտատնտեսագիտական		**4,63**	**4,63**	**4,55**
5	Ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների	4,79	4,75	4,47
6	Կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի	4,61	4,72	4,49
7	Կառավարման և ֆինանսների	4,53	4,59	4,69
8	Հաշվապահական հաշվառման	4,61	4,58	4,58
Միջին գնահատական		**4,67**	**4,66**	**4,52**

Երրորդ հարցի դեպքում Հումանիտար մասնագիտությունների և Բնագիտատնտեսագիտական ֆակուլտետներում կրկին նկատվում է պրոֆեսորադասախոսական կազմի միջին գնահատականի նվազում:

Երրորդ հարցի պատասխանների արդյունքներով ԳՊՀ ամբիոններից առավել բարձր միջինացված գնահատական գրանցվել է Կառավարման և ֆինանսների ամբիոնում՝ 4,69 միավոր: Ամենացածր միջինացված արդյունք ամրագրվել է Հասարակական գիտությունների ամբիոնում՝ 4,38 միավոր:

Համեմատական վերլուծության համար 2021-2022, 2022-2023, 2023-2024 ուսումնական տարիների միջինացված գնահատականների արդյունքները ներկայացնենք գծապատկերի տեսքով /տե՛ս գծապատկեր 6/:

Գծապատկեր 5.



Հարց 4-րդ. Դասախոսը ուսանողներին հնարավորություն է տալիս իրեն դիմել լսարանից դուրս՝ դասընթացին առնչվող հարցերով:

Հ/հ	Ֆակուլտետ, ամբիոն	2021-2022 ուստարի	2022-2023 ուստարի	2023-2024 ուստարի
Հումանիտար մասնագիտությունների		**4,56**	**4,77**	**4,70**
1	Հայոց լեզվի և գրականության	4,59	4,86	4,81
2	Օտար լեզվի և գրականության	4,40	4,61	4,66
3	Իրավագիտության	4,92	4,92	4,72
4	Հասարակական գիտությունների	4,36	4,71	4,62
Բնագիտատնտեսագիտական		**4,46**	**4,71**	**4,69**
5	Ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների	4,66	4,67	4,68
6	Կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի	4,37	4,79	4,59
7	Կառավարման և ֆինանսների	4,34	4,67	4,78
8	Հաշվապահական հաշվառման	4,48	4,73	4,73
Միջին գնահատական		**4,51**	**4,74**	**4,69**

2022-2023 և 2023-2024 ուսումնական տարիների համեմատության արդյունքում պարզ է դառնում, որ չորրորդ հարցի դեպքում երկու ֆակուլտետներում էլ նկատվում է պրոֆեսորադասախոսական կազմի միջին գնահատականի նվազում:

Չորրորդ հարցի պատասխանների արդյունքներով ԳՊՀ ամբիոններից առավել բարձր միջինացված գնահատական գրանցվել է Հայոց լեզվի և գրականության ամբիոնում՝ 4,81 միավոր: Ամենացածր միջինացված արդյունքն ամրագրվել է Կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնում՝ 4,59 միավոր:

2021-2022, 2022-2023 և 2023-2024 ուսումնական տարիների միջինացված գնահատականների արդյունքները ներկայացնենք գծապատկերի տեսքով /տե՛ս գծապատկեր 6/:

Գծապատկեր 6.



Հարց 5-րդ. Դասախոսը խրախուսում է ուսանողների ինքնուրույն աշխատանքը, հնարավորություն է տալիս ձևավորել հետազոտական հմտություններ:

Հ/հ	Ֆակուլտետ, ամբիոն	2021-2022 ուստարի	2022-2023 ուստարի	2023-2024 ուստարի
Հումանիտար մասնագիտությունների		**4,7**	**4,76**	**4,6**
1	Հայոց լեզվի և գրականության	4,78	4,8	4,72
2	Օտար լեզվի և գրականության	4,62	4,57	4,53
3	Իրավագիտության	4,92	4,88	4,66
4	Հասարակական գիտությունների	4,50	4,80	4,50
Բնագիտատնտեսագիտական		**4,65**	**4,74**	**4,63**
5	Ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների	4,65	4,84	4,59
6	Կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի	4,59	4,79	4,49
7	Կառավարման և ֆինանսների	4,67	4,64	4,73
8	Հաշվապահական հաշվառման	4,71	4,69	4,73
Միջին գնահատական		***4,68***	***4,75***	***4,61***

Երեք ուսումնական տարիների համեմատության արդյունքում պարզ է դառնում, որ հինգերորդ հարցի դեպքում պրոֆեսորադասախոսական կազմի միջին գնահատականի նվազում է նկատվել:

Հինգերորդ հարցի պատասխանների արդյունքներով ԳՊՀ ամբիոններից առավել բարձր միջինացված գնահատական գրանցվել է Կառավարման և ֆինանսների ու Հաշվապահական հաշվառման ամբիոններում՝ 4,73 միավոր, Ամենացածր միջինացված գնահատական գրանցվել է Կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնում:

Համեմատական վերլուծության համար 2021-2022, 2022-2023 և 2023-2024 ուսումնական տարիների միջինացված գնահատականների արդյունքները ներկայացնենք գծապատկերի տեսքով /տե՛ս գծապատկեր 8/:

Գծապատկեր 8.



Հարց 6-րդ. Դասախոսը օբյեկտիվ է և ուսանողների գիտելիքները գնահատում է անկողմնակալ և թափանցիկ:

Հ/հ	Ֆակուլտետ, ամբիոն	2021-2022 ուստարի	2022-2023 ուստարի	2023-2024 ուստարի
Հումանիտար մասնագիտությունների		**4,65**	**4,78**	**4,63**
1	Հայոց լեզվի և գրականության	4,62	4,83	4,66
2	Օտար լեզվի և գրականության	4,61	4,68	4,65
3	Իրավագիտության	4,92	4,87	4,71
4	Հասարակական գիտությունների	4,47	4,75	4,52
Բնագիտատնտեսագիտական		**4,65**	**4,77**	**4,71**
5	Ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների	4,75	4,86	4,64
6	Կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի	4,55	4,81	4,64
7	Կառավարման և ֆինանսների	4,64	4,76	4,76
8	Հաշվապահական հաշվառման	4,69	4,66	4,83
Միջին գնահատական		***4,65***	***4,77***	***4,67***

Երեք ուսումնական տարիների համեմատության արդյունքում պարզ է դառնում, որ վեցերորդ հարցի դեպքում պրոֆեսորադասախոսական կազմի միջին գնահատականի կրկին նվազում է նկատվել:

Վեցերորդ հարցի պատասխանների արդյունքներով ԳՊՀ ամբիոններից առավել բարձր միջինացված գնահատական գրանցվել է կրկին Հաշվապահական հաշվառման ամբիոնում՝ 4,83 միավոր: Ամենացածր՝ Հասարակական գիտությունների ամբիոնում՝ 4,52 միավոր:

2021-2022, 2022-2023 և 2023-2024 ուստարիների միջինացված գնահատականների արդյունքները ներկայացնենք գծապատկերի տեսքով /տե՛ս գծապատկեր 9/։

Գծապատկեր 9.



Հարց 7-րդ. Դասախոսը հետևում է լսարանի արձագանքին, բարյացակամ և հարգալից է ուսանողների հանդեպ:

Հ/հ	Ֆակուլտետ, ամբիոն	2021-2022 ուստարի	2022-2023 ուստարի	2023-2024 ուստարի
Հումանիտար մասնագիտությունների		**4,63**	**4,84**	**4,75**
1	Հայոց լեզվի և գրականության	4.63	4.91	4,80
2	Օտար լեզվի և գրականության	4.53	4.74	4,69
3	Իրավագիտության	4.91	4.9	4,80
4	Հասարակական գիտությունների	4.46	4.82	4,74
Բնագիտատնտեսագիտական		**4,58**	**4,82**	**4,76**
5	Ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների	4.74	4.77	4,67
6	Կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի	4.56	4.88	4,66
7	Կառավարման և ֆինանսների	4.47	4.86	4,83
8	Հաշվապահական հաշվառման	4.55	4.79	4,90
Միջին գնահատական		***4.6***	***4,83***	***4,75***

Յոթերորդ հարցի դեպքում կրկին բոլոր ֆակուլտետներում նկատվում է պրոֆեսորադասախոսական կազմի միջին գնահատականի նվազում:

Յոթերորդ հարցի պատասխանների արդյունքներով ԳՊՀ ամբիոններից առավել բարձր միջինացված գնահատական գրանցվել է Հաշվապահական հաշվառման ամբիոնում՝ 4,90 միավոր: Ամենացածր՝ Կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնում՝ 4,66 միավոր:

Համեմատական վերլուծության համար 2021-2022, 2022-2023 և 2023-2024 ուստարիների միջինացված գնահատականների արդյունքները ներկայացնենք գծապատկերի տեսքով /տե՛ս գծապատկեր 8/:

Գծապատկեր 10.



Յոթ հարցերի միջինացված արդյունքներն՝ ըստ 2 ֆակուլտետների և 8 ամբիոնների

Հ/հ	**Ֆակուլտետ, ամբիոն**	**2021-2022 ուստարի**	**2022-2023 ուստարի**	**2023-2024 ուստարի**
Հումանիտար մասնագիտությունների		**4,64**	**4,76**	**4,63**
1	Հայոց լեզվի և գրականության	4.68	4.8	4,71
2	Օտար լեզվի և գրականության	4.53	4.63	4,6
3	Իրավագիտության	4.91	4.86	4,68
4	Հասարակական գիտությունների	4.46	4.75	4,56
Բնագիտատնտեսագիտական		**4,58**	**4,73**	**4,64**
5	Ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների	4.69	4.78	4,59
6	Կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի	4.52	4.8	4,55
7	Կառավարման և ֆինանսների	4.52	4.68	4,73
8	Հաշվապահական հաշվառման	4.6	4.69	4,72
Միջին գնահատական		**4.61**	**4.74**	***4,63***

Յոթ հարցերի պատասխանների արդյունքներով կրկին բոլոր ֆակուլտետներում նկատվում է պրոֆեսորադասախոսական կազմի միջին գնահատականի նվազում:

Յոթ հարցերի պատասխանների արդյունքներով ԳՊՀ ամբիոններից առավել բարձր միջինացված գնահատական գրանցվել է Կառավարման և ֆինանսների և Հաշվապահական հաշվառման ամբիոններում, համեմատությամբ նախորդ ուստարվա նույնիսկ գրանցվել է միջինացված գնահատականի աճ՝ 0,3-ից 0,5 միավորների սահմաններում: Ամենացածր միջինացված գնահատականի գրանցվել է Կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի և Հասարակական գիտությունների ամբիոնում՝ 4,55 և 4,56 միավորներ:

Հարց 8-րդ. Գնահատեք Ձեր բաժնի ուսումնական խորհրդատու (ների)՝ ուսանողների հետ տարվող աշխատանքը:

Հ/հ	**Ֆակուլտետ, ամբիոն**	**2023-2024 ուստարի**
	Հումանիտար մասնագիտությունների	
1	Հայոց լեզվի և գրականության	4,75
2	Օտար լեզվի և գրականության	4,31
3	Իրավագիտության	4,65
4	Հասարակական գիտությունների	4,55
	Բնագիտատնտեսագիտական	
5	Ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների	4,1
6	Կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի	3,86
7	Կառավարման և ֆինանսների	4,29
8	Հաշվապահական հաշվառման	3,5

9. **Ձեր կարծիքը և առաջարկները**

(Խնդրում ենք նշել գործոնները, որոնք, ըստ Ձեզ, կնպաստեն ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպմանը):

I. Բնագիտատնտեսագիտական ֆակուլտետ

1. Լաբորատոր աշխատանքների իրականացում յուրաքանչյուր առարկայի շրջանակում: /ՀՃ 4-րդ/
2. Պրակտիկաների պատշաճ իրագործում: Ուսումնական էքսկուրսիաների ավելի հաճախ կազմակերպում: /ՀՃ 4-րդ/
3. Թիմային աշխատանքների կազմակերպում: /ԴՔ 4-րդ/
4. Շնորհակալություն ընկեր Մուրադյանին, Մարգարյանին, Մարկոսյանին: Նրանք բարձր արժեքներ կրող մարդիկ են: /ՀՀ-2րդ/
5. Դասացուցակը կազմելիս ուշադրություն դարձնել ուսումնական գործընթացի արդյունավետությանը: /ՀՀ 2-րդ/
6. Վերացնել ուսումնական խորհրդատուների աշխատանքը: Ուսումնական խորհրդատուներին վերապատրաստել իրենց պարտականությունների շրջանակում: /ՀՀ 2-րդ/
7. Դասացուցակի փոփոխության դեպքում նախապես զգուշացնել: Քննությունների փոփոխության դեպքում նախազգուշացնել: Բոլոր դասախոսների նյութերը, հարցաշարերը լինեն տեղադրված կայքում: /ՀՃ 2-րդ/
8. Շնորհակալություն տիկին Ռուզաննա Հակոբյանին և ԳՊՀ աշխատակիցներին:/ՀՃ 2-րդ/
9. Բարելավել ԳՊՀ կայքի աշխատանքը, հանել միջանկյալ քննությունները և կրճատել քննությունների քանակը: /ՀՃ 2-րդ/
10. Համալսարանում անծանոթ ոչ ուսանող տղաների ներկայությունը խանգարում է դասապրոցեսին:
11. Մեկ օրում 4 դասաժամ ունենալը սխալ է: /Ֆ 1-ին/
12. Դասերն անցկացնել տեղեկատվական տեղնոլոգիաների կիրառմամբ: /Ֆ 1-ին/
13. Դասավանդման ընթացքում կարևորել գործնական հմտությունների ձևավորումը: /Ֆ 1-ին մագ/
14. Դասապրոցեսը ավելի հետաքրքիր ընթացք կունենա, եթե կարողանանք օգտվել լաբորատորիաներից: /ՀՃ 1-ին/
15. Անհատական աշխատանքների քանակը կրճատել:: /Ֆ 3-րդ/
16. Հետ բերել զանգը, քանի որ ազդում է կենտրոնացման վրա: /Ֆ 3-րդ/

II. Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետ

1. Պրակտիկաների ժամաքանակն ավելացնել, հանել ոչ մասնագիտական առարկաների անհատական աշխատանքները: /ՏՐ 2-րդ/
2. Դասամիջոցներին հնչեն հայրենասիրական երգեր: /ՏՐ 2-րդ/
3. Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետում բացել գրադարան: Ինչպես նաև ՀԼ 3-րդ կուրսի մանկավարժական պրակտիկան տեղափոխել փետրվար-մարտ ամիսներին: /3-րդ/
4. Ոչ մասնագիտական առարկաների անհատականները խնդրում եմ հանել: /ՊՏ 2-րդ/
5. Պատմական առարկաները թարմացնել, ավելացնել ավելի արդիական առարկաներ: Դասերը անցկացնել ավելի հետաքրքիր մեթոդներով, անհրաժեշտության դեպքում անցկացնել գիտարշավներ: Ժամանակին տեղեկացնել ուսանողին որևէ կարևոր ինֆորմացիայի վերաբերյալ՝ մասնավորապես դասացուցակ կազմելիս: Ինչպես նաև միջանկյալ քննությունների և ամփոփիչ քննությունների օրերն ուսանողին հայտնել նվազագույն 2 շաբաթ առաջ: /ՊՏ 2-րդ/
6. Ուսումնական պլանում ներառել թուրքերեն լեզուն և գրաբարը: /ՊՏ 2-րդ/
7. Համակարգչային լսարանների քանակը ավելացնել: Վերանայել դասավանդման մեթոդները: /ՀԼ 1-ին/
8. Ոչ մասնագիտական առարկաների անհատական աշխատանքները հանել: /ԱԼ 2-րդ/
9. Անհատական աշխատանքները լինեն միայն մասնագիտական առարկաներից: /ԱԼ 2-րդ/
10. Կարևորել մասնագիտական գրականության ցանկը: Գրքերի ցանկ տրվի արձակուրդների ժամանակ: /ԱԼ 2-րդ/
11. Ստեղծել բանավեճի, ստեղծագործական ակումբներ: Կազմակերպել ֆակուլտետային գիտաժողովներ: /ԱԼ 2-րդ/
12. Քննության ժամանակ լինեն նաև դեկանատի աշխատակիցները, քանի որ կան ոչ օբյեկտիվ դասախոսներ: /ԱԼ 3-րդ/:
13. Անհատական աշխատանքներին զուգահեռ չհանձնարարեն լրացուցիչ թղթապանակ պատրաստել:/ ՏՐ 4-րդ/
14. Դասացուցակը այնպես լինի, որ ծանրաբեռնվածությունը հավասարաչափ լինի:/ԻԳ 2-րդ/
15. Հանել անհատական աշխատանքները:/ԻԳ 2-րդ/
16. ԻԳ բաժնի ուսանողները 3-րդ կուրսից գնան պրակտիկա: /ԻԳ 2-րդ/
17. Միջանկյալ քննությունները դարձնել բանավոր: /ԻԳ 2-րդ/
18. Դասացուցակը կիրակի տեղադրված լինի:/ԻԳ 2-րդ/
19. Անհատականն աշխատանքները հանել: /ԱԼ 1-ին/
20. Շնորհակալություն Գավառի պետական համալսարանին: /ՊՏ 1-ին/
21. Կցանկանայի, որ բոլոր դասախոսները լինեն ընկեր Հայրապետյանի նման:/ՊՏ 1-ին/
22. Կցանկանայի, որ պրակտիկան անցկացվի 3-րդ կուրսից:/ԻԳ 3-րդ/

23. Կազմակերպել այց քննչական կոմիտե, դատախազություն, նոտարական գրասենյակ և այլ պետական մարմիններ, կազմակերպել փորձնական աշխատանքներ, 3-րդ կուրսի երկրորդ կիսամյակում պարտադիր նախատեսել ուսումնական պրակտիկա, այցելել դատարաններ և խթանել իրավաբանների գործնական հմտությունների զարգացումը: /ԻԳ 3-րդ/
24. Խնդրում եմ անհատական աշխատանքները գրել միայն մասնագիտական առարկաներից: Վերանորոգել ՀՄՖ մասնաշենքը: /ԻԳ 1-ին/
25. Անհատական աշխատանքները հանել, դասամիջոցի երաժշտությունը փոխել: /ԻԳ-ին/
26. Դասախոսները լինեն ավելի հետևողական: /ՀԼ 4-րդ/
27. Գրադարանը համալրել նոր գրքերով:/ՀԼ 4-րդ/
28. Կազմակերպել միջոցառումներ, բանավեճեր:/ՀԼ 4-րդ/
29. Ուսանողների գիտելիքները գնահատել անկողմնակալ:/ՀԼ 4-րդ/
30. Ավանդական դասախոսության մեթոդը փոխել ժամանակակից մեթոդով: /ՀԼ 4-րդ/
31. Ավելացնել պրակտիկաների ժամերը: /ԻԳ 4-րդ/

IV. Եզրակացություններ, առաջարկություններ

Գավառի պետական համալսարանում դասավանդման որակի և ուսումնական գործընթացի արդյունավետության գնահատման հարցման և երեք ուսումնական տարիների համեմատության արդյունքները ցույց են տալիս, որ 2023-2024 ուսումնական տարում գրանցվել է դասախոսների ընդհանուր միջինացված գնահատականի նվազում: ԳՊՀ երկու ֆակուլտետների դասախոսների միջինացված գնահատականը 2023-2024 ուսումնական տարում, 2022-2023 ուսումնական տարվա համեմատությամբ, նվազել է՝ 4,74-ից կազմելով 4,63 միավոր: Ըստ ամբիոնների ամենաբարձր միավոր գրանցվել է Կառավարման և ֆինանսների և Հաշվապահական հաշվառման ամբիոններում, համեմատությամբ նախորդ ուստարվա նույնիսկ գրանցվել է միջինացված գնահատականի աճ՝ 0,3-ից 0,5 միավորների սահմաններում: Ամենացածր միջինացված գնահատականի գրանցվել է Կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի և Հասարակական գիտությունների ամբիոնում՝ 4,55 և 4,56 միավորներ:

Հարցման արդյունքները երկու ֆակուլտետների դեկանատների, համապատասխան ամբիոնի վարիչների, Ակադեմիական քաղաքականության բաժնի կողմից քննարկման և ուսումնասիրման կարիք ունեն: Հարցման արդյունքներին կարելի է կրկին անդրադառնալ ԳՊՀ-ում անցկացվող ընդհանուր դասալսումներից հետո, երբ կամփոփվեն դասախոսների գնահատականները:

Գավառի պետական համալսարանում դասավանդման որակի և ուսումնական գործընթացի արդյունավետության գնահատման վերլուծության արդյունքները, եզրակացություններն ու առաջարկությունները հղվել են ԳՊՀ բոլոր ստորաբաժանումներին, որպեսզի ուսումնասիրվեն, ներկայացվեն համապատասխան լուծումներ ու առաջարկություններ, արդյունքում ձեռնարկվեն միջոցներ՝ ԳՊՀ հիմնական շահառուների՝ ուսանողների, բավարարվածության աստիճանը բարձրացնելու ուղղությամբ: